ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ (V—IX ԴԴ.)

Վ. Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

V դարից նշանակալիորեն մեծանում է Արծրունյաց իշխանության ազդեցությունը Հայաստանի քաղաքական կյանքում։ Մարդպետների ֆեոդալական կորեղ տան իրավասությանը ենթակա գավառների հաշվին Արծրունյաց իշխանները կարողացան ընդարձակել իրենց հողատիրությունները։ Նրանց ներքին և արտաքին քաղաքականությունը նպատակամղված էր իրենց տոհմի իշխանության ֆեոդալական հիմքերի ըստ ամենայնի ամրապնդմանը, վասալական ոլորտի ընդլայնմանը, որի համար հիմք էր ծառայում նրանց հողային մեծ հարստությունը։ Ընդ որում այս ուղեգիծը հստակորեն նշմարվում է Վասպուրականի իշխանության պատմության գրեթե ամբողջ ընթացքում։ Սկզբնաղբյուրների վկայություններից երևում է, որ V դարում Արծրունյաց իշխանության լայնատարած հողային հարստություններին տիրում էին խոշոր արիստոկրատական տոհմերից սերած ֆեոդալները, որոնք իշխում էին իրենց ենթակա գավառներում և հիշվում են նահապետ, նախարար. տեր (իշխան)[1], իսկ նրանց իրավասությանը ենթակա շրջանները՝ տերություն (իշխանություն), նախարարություն անուններով։ Ընդսմին Հայաստանի ֆեոդալական համակարգում Արծրունիները ճանաչվում էին որպես ավագ նախարարներ[2]։ Արծրունյաց նախարարության գլուխը՝ տանուտերը (նահապետը), որպես հին արիստոկրատիայի ականավոր ներկայացուցիչ, իշխում էր իր տոհմի իրավասությանը ենթակա գավառներին, ընդարձակ հողատիրություններին, տնօրինում Արծրունիների իշխանության ռազմաքաղաքական և իրավական գործերը։ Ընդարձակ էր իշխանության տնտեսական հիմնաշենքը, թեև պետք է նշել, որ ֆեոդալ-հողատերերի կողմից արդյունքների յուրացումը, հարկային հարաբերությունները, ֆեոդալական շահագործման այլևայլ ձևերը V դարում հիմնականում դեռևս ունեին նահապետական գծեր։ Սակայն հետզհետե երկրամասի ֆեոդալականացման երկարատև (V—IX դդ.) ընթացքում ֆեոդալական հարաբերությունները կրեցին արմատական փոփոխություններ և հետզհետե կատարելագործվեցին շահագործման ձևերը։

V դարից Արծրունյաց իշխանության մեջ որոշ տարածում է գտնում սեպուհության ինստիտուտը։ Ն. Ադոնցի կարծիքով «սեպուհական իրավունքը» Հայաստանում ծագել է հայ Արշակունիների անկումից հետո և զարգացում է ապրել VI դարում[3]։ Ա. Պ. Նովոսելցևը այդ ինստիտուտի ծագումը թվագրում է IV դարով[4]։ Աղբյուրներից երևում է, որ V դարում սեպուհության ինստիտուտը արդեն տարածված էր Արծրունյաց տիրություններում։ Դատելով ըստ ամենայնի, ֆեոդալական հողատիրության այդ տեսակը ձևավորվել է նախարարների հողային շնորհումների, նվիրատվությունների շնորհիվ։ Սկզբնապես սեպուհները հիմնականում ծառայապարտ խավ էին, ինչը հայտնապես երևում

---

[1] *Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխ. Մ. Աբեղյան և Ս. Հարությունյան. Տփղիս, 1913, III, ԻԹ, էջ 292, 350։*

[2] *Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց. Ս. Պետերբուրգ, 1883, IV, ԻԳ, էջ 118*

[3] Н. Адонц. Армения в эпоху Юстиниана. Ереван, 1971, с. 474, 475.

[4] А. П. Новосельцев. Генезис феодализма в странах Закавказья. М. 1980, с. 197.

է Ղազար Փարպեցու, Եղիշեի և այլ մատենագիրների վկայություններից։ Անշուշտ, սեպուհներն այդ շրջանում նախապատվությունը տալիս էին ոչ թե տնտեսական, այլ զինվորական զբաղմունքներին, մանր ազատների հետ համալրելով ֆեոդալական այրուձին։ Փաստորեն նրանց հիմնական գործառնությունը հանգում էր տվյալ նախարարության քաղաքական շահերի և տոհմի պատվի պաշտպանությանը։

Ֆեոդալական հարաբերությունների հետագա զարգացման պայմաններում հետզհետե սեպուհները ձեռք են բերում որոշակի ինքնուրույնություն։ Զբաղվելով տնտեսական գործունեությամբ, նրանց մեծ մասը աստիճանաբար վերածվում է ինքնուրույն տնտեսություն վարող հողատեր-ֆեոդալների (հաճախ նույնիսկ դրսևորվում անջատողական միտումներ), պահպանելով հիմնականում նաև իր ծառայապարտ կացությունը։ Այս ինստիտուտի ֆեոդալական բնույթը դրսևորվեց հատկապես այն բանում, որ սեպուհները հետզհետե վերածվեցին ժառանգական հողատերերի։ Դրան զուգահեռ հին արիստոկրատիան՝ նախարարությունը, որ իր տրամադրության տակ էր պահում երկրամասի հողային հարստությունների մեծագույն մասը, նույնպես կրեց որոշակի փոփոխություններ։ Ֆեոդալականացման պայմաններում տնտեսական կյանքի հինավուրց, նահապետական ձևերն ընդհանրապես արմատական փոփոխությունների ենթարկվեցին։ Նախարարական կարգը ապրել էր իր գարը, այն պետք է իր տեղը զիջեր տնտեսական և քաղաքական նոր, ավելի կենսունակ ձևերի։ Իհարկե, նախարարական շրջանի հարաբերություններն իսպառ չվերացան և մասամբ պահպանեցին իրենց ներհատուկ որոշ գծեր նաև հետագայում։ Տվյալ տոհմի տիրույթները նախկինի պես շարունակեցին կոչվել հավաքական անունով՝ տուն, իսկ տոհմի սեփականությունը շարունակեց դիտվել որպես տոհմի անդամների «եղբայրական հաս», բաժին։ Ընդ որում, տոհմի սեպուհները դիտվում էին որպես տվյալ տոհմի նույնիրավ անդամներ, «եղբայրներ»[5]։ Այս սկզբունքը պահպանվեց ֆեոդալական հարաբերությունների զարգացման երկարատև ժամանակաընթացքում և, հավանաբար, նպաստեց սեպուհների վերածմանը տվյալ տոհմի միջին ֆեոդալների (գահակալ իշխանների)։ Միաժամանակ հարկ է նշել, որ հողատերերի այս նոր տեսակը արմատապես տարբերվում էր հին՝ նախարարական ավագանուց, սակայն այդ հանգամանքը չէր խանգարում, որպեսզի միջին հողատերերը կազմեին ֆեոդալական դասակարգի հիմնական շերտը։ Որպես այդ պրոցեսի օրինաչափ հետևանք, խոշոր հողատիրությունը ձեռք բերեց ֆեոդալական աստիճանակարգմանը բնորոշ առանձնահատկություններ։ Ուշագրավ է, որ Ղազար Փարպեցին սեպուհներին հիշում է նշանավոր նախարարներից հետո, տարբերակելով ավագ և կրտսեր սեպուհներին[6]։ Միաժամանակ տեղի է ունենում հողատեր-սեպուհների սերտաճում ֆեոդալական ավագանու վերնաշերտի հետ։ Ցուցանշական է, որ Արծրունյաց տոհմի պատմիչը իր տոհմի որոշ սեպուհների նույնիսկ անվանում է նախարարներ[7]։ Սեպուհական հողատիրությունը միջին ֆեոդալների քաղաքական իշխանության հիմքն էր և, բնականաբար, Արծրունյաց իշխանության կարևորագույն սոցիալ-քաղաքական հենարանը։ Այդպիսով միջին ֆեոդալները իրենց հողատիրական և քաղաքական կարողությամբ կազմում էին վասալական-քաղաքական այն հիմնական ուժը, որը մեծապես նպաստում էր Արծրունյաց իշխող տոհմաճյուղի տերունական իրավազորության ընդլայնմանը։

Հարկ է նշել, որ Արծրունյաց իշխանությունում ֆեոդալական հարաբերությունների զարգացումը ուղեկցվում էր իշխող ֆեոդալական տների հողատի-

---

5 Թովմայի վարդապետի Պատմութիւն տանն Արծրունեաց. Թիֆլիս, 1917, III, ժէ, էջ 344։

6 Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխ. Դ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանի. Թիֆլիս, 1904, Բ, էջ 58, 75։

7 Թովմա Արծրունի. II, Զ, էջ 186։

ության ընդլայնմամբ։ Մարզպանության շրջանում Արծրունիները նշանակալիորեն ընդարձակեցին իրենց հողատիրույթները։ Դրան նպաստեց Մարդպետների ֆեոդալական զորեղ տոհմի անկումը ու քաղաքական ասպարեզից հեռանալը։ Հայտնի է, որ Արծրունիների և Մարդպետների միջև անհաշտ մրցակցություն գոյություն ուներ։ Ինչպես հաղորդում է Փավստոս Բուզանդը, տակավին IV դարում Արծրունյաց նախարարը սպանեց այդ տոհմի գլխավորին[8]։

Արաբական խալիֆայության տիրապետության ժամանակաշրջանում Արծրունյաց իշխանության նախարարները պահպանեցին իրենց ֆեոդալական իրավունքները և հողատիրույթները։ Խալիֆայության սոցիալական և տնտեսական քաղաքականությունը և դրանք գործադրող հիմնարկները, ինչպես կարելի է մակաբերել սկզբնաղբյուրների տվյալներից, սկզբնական շրջանում նշանակալիորեն հարմարեցվում էին տեղական ֆեոդալական հարաբերություններին։ Ընդ որում, խալիֆայությունը թե՛ այս և թե՛ հետագա ժամանակաշրջանում առանձին ունակություն չցուցաբերեց Հայաստանի, այդ թվում և Վասպուրականի տնտեսական ու հոգևոր-մշակութային յուրացման գործում։ Այդ պատճառով երկրում պահպանվեցին ֆեոդալական հողատիրության ավանդական ձևերը։ Սակայն դրա հետ մեկտեղ Հայաստանի նախարարական որոշ տներ վերացան քաղաքական ասպարեզից, սահմանափակվեցին ոմանց հողակալական իրավունքները։ Միաժամանակ հարկ է նշել, որ արաբները շահագրգռված էին Հայաստանի հարկունակ բնակչության պահպանմամբ, որով, բնականաբար, կավելացնեին իրենց հարկային հասույթները։ Դրա հետ մեկտեղ արաբները հանդուրժում էին նաև հարկունակ բնակչության անմիջական շահագործողներին՝ հայ ֆեոդալներին, որոնք խալիֆայության համակարգում հաճախ դառնում էին վերջինիս տնտեսական քաղաքականության կենսագործողներն իրենց իրավասությանը ենթակա գավառներում։ Տնտեսական համագործակցության հետ միաժամանակ Վասպուրականի ֆեոդալները արաբներին սատարում էին նաև ռազմական ասպարեզում[9]։ Հարկային պարտույթների կատարումը, զինական աջակցությունը այն գլխավոր պայմաններն էին, որոնք արաբական զորապետներին և փոխարքաներին ստիպում էին տեղացի իշխանների հետ կնքած պայմանագրերով երաշխավորել հայ ֆեոդալների և նրանց ենթակա բնակչության անձեռնմխելիությունը[10]։ Փաստորեն խալիֆայության տիրապետության պայմաններում Վասպուրականում հողատիրության ավանդական ձևերը մեծ փոփոխություններ չկրեցին։ Արաբական աղբյուրների ընձեռած տվյալներից երևում է, որ արաբ զորապետների հետ Վասպուրականի իշխանների կնքած երկկողմ պայմանագրերի շնորհիվ երաշխավորվում էր նրանց ֆեոդալական իրավունքների, հողային սեփականության պահպանումը[11]։ Սամվել Անեցու վկայությամբ, երբ խալիֆայության զորաբանակը գրավեց Վանա լճի շրջակայքում ընդգրկված գավառները, խալիֆայի ներկայացուցիչները, հայերի հետ փոխադարձ համաձայնությամբ, հարկատվության պայմանով վերջիններիս թույլ տվեցին պահպանել իրենց հավատը[12]։ Հայերի և արաբ զորապետների միջև կնքված պայմանագրերին ավելի հանգամանորեն անդրադառնում է Սեբեոսը։ Արաբ զորապետների հետ կնքված պայմանագրերի շնորհիվ պահպանվեցին Վասպուրականի ֆեոդալական ժառանգական (հալրենիք) և պայմանական (պարգևա-

---

8 Փավստոս Բուզանդ. IV, ԺԴ, էջ 98։

9 Genesii Regum ex regonitione Caroli Lachmani. Bonnae, 1834, p. 67.

10 Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց, աշխ. Կ. Եզեան. Ս. Պետերբուրգ, 1887, ԽԷ, էջ 152։

11 Balādhuri. The origins of the islamic State being translation from the arabic accompanied with annotations, geographic and historic notes of the Kitāb Futūh al-Buldan. Vol. I, New York, 1916, p. 313—314, 315.

12 Սամուէլի քահանայի Անեցւոյ Հավաքմունք ի գրոց պատմագրաց. Վաղարշապատ, 1893, էջ 82։

կանք) համարվող հողատիրությունները, ինչպես նաև եկեղեցու և գյուղահամայնքների տրամադրության տակ եղած հողերը։ Մեր ձեռքի տակ եղած սկզբնաղբյուրների ընձեռած տվյալներից դատելով, Վասպուրականի իշխանությունում խալիֆայության աստիճանավորները սահմանափակվեցին պետական հարկի գանձմամբ (հայկական աղբյուրներում այս հարկը արտահայտված է հավաքական «արքունի հարկ», «արքունի հաս» հասկացություններով), չխառնվելով երկրամասի հողատիրական հարաբերություններին։ Իհարկե, ստեղծված պայմաններում Վասպուրականի իշխանության ֆեոդալների հողատիրությունների տնտեսական իրացման հնարավորությունները զգալիորեն սահմանափակվեցին։ Գյուղացիության հավելյալ աշխատանքի մեծ մասի արդյունքները փոխանցվում էին խալիֆայության գանձատուն, որպես «արքունի հարկ», որն այդպիսով վեր էր ածվում միասնական, կենտրոնացված հողային ռենտայի։ Միաժամանակ, իհարկե, տեղական ֆեոդալներն իրենք նույնպես յուրացնում էին գյուղացու աշխատանքի արդյունքների զգալի մասը։

Օմայանների օրոք ստեղծված քաղաքական և սոցիալ-տնտեսական իրավիճակում որոշ նպաստավոր պայմաններ ստեղծվեցին ֆեոդալ-հողատերերի համախմբման, ֆեոդալական տիրույթների ընդարձակման համար։ Նախարարական հողատիրության պահպանումը, նույնիսկ ընդարձակումը, պետք է կարծել, չէր հակասում Օմայան խալիֆայության համակարգում գործող հողասեփականատիրական սկզբունքներին, ուստի հայ ֆեոդալների համախմբումը, առանձին տների խոշորացումը և զորացումը դառնում էր հնարավոր։ Այս երևույթը նպաստում էր նաև մանր ֆեոդալների տնտեսական շահերին։ Հարկային պարտությունները թեթևացնելու միտումով մանր հողատերերը, որոնք իրենց հողերը ստացել էին խոշոր ֆեոդալներից, գերադասում էին մնալ նրանց հովանավորության տակ, որի շնորհիվ նրանք հարկման էին ենթարկվում ոչ թե առանձին-առանձին, այլ հովանավորող տան հետ միասին։ Ուստի հաճախ մանր հողատերերը համախմբվում էին ավելի խոշորների շուրջը։ Այս ճանապարհով Օմայաններին հպատակված երկրներում ոչ միայն պահպանվում, այլև հաճախ ստեղծվում էր ֆեոդալական խոշոր հողատիրություն[13]։ Հարկ է նշել, որ Հայաստանում նույնպես այդ շրջանում ստեղծվեցին ֆեոդալական խոշոր հողատիրություններ, ի դեմս Բագրատունի, Արծրունի, Սյունյաց և ուրիշ տների։

Դրությունը փոխվեց Աբբասյանների իշխանության գլուխ անցնելուց հետո, երբ երկրում ստեղծվեց ծանր իրավիճակ, որից հայ ֆեոդալները երբեմն ելք էին գտնում ապստամբության կամ տարագրվելու միջոցով։ Ղևոնդ պատմիչի մոտ պահպանվել է բնորոշ մի փաստ Վասպուրականի Արտազ գավառից 780-ական թթ. ֆեոդալական տոհմի տարագրության մասին[14]։ Անշուշտ, ֆեոդալ-հողատերը առանց պատճառի չէր թողնի իր հայրենի տիրույթները, տուն ու տեղը, տոհմական ստացվածքները։ Փաստորեն ֆեոդալների տարագրվելը մի բողոք էր օտար տիրապետության հարաճուն ճնշման դեմ։

Հետևհետե ավելի սրվեցին շահագործող դասակարգի երկու տեսակների՝ խալիֆայության համակարգի ֆեոդալական ավագանու և տեղական հայ իշխանների միջև եղած հակասությունները։ Շահերի բախման դեպքում, բնականաբար, զորեղի առջև տեղի էր տալիս ավելի թույլը։ Սակայն ֆեոդալ-աղատների հարկադրական տարագրությունը բնավ չէր բարվոքում երկրում ստեղծված ծանր իրավիճակը։ Ընդ որում մի քանի տարի հետո Վասպուրականից հեռացան նաև ուրիշ ֆեոդալներ[15]։

Չնայած սոցիալական, քաղաքական և կրոնական ծանր հալածանքներին, երբեմն ստեղծված անելանելի կացությանը, Աբբասյանների օրոք Արծրունյաց նախարարներին հաջողվեց պահպանել և նույնիսկ ընդլայնել իրենց ֆեոդալա-

---

[13] А. Мец. Мусульманский ренессанс. М., 1973, с. 103.

[14] Ղևոնդ. ԽԲ, էջ 168։

[15] Հաւաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի. Վենետիկ, 1862, ԽԱ, էջ 77։

կան իրավունքները, հողատիրությունները։ Փաստորեն հայ նախարարների նկատմամբ Աբբասյանների որդեգրած քաղաքականությունը ոչ միշտ էր, որ ցանկալի արդյունքներ էր տալիս։ Ուստի, ինչպես նկատում է X դարի արաբ մատենագիր Հիլալ աս Սաբին, նույնիսկ նշանավոր Հարուն ար Ռաշիդ խալիֆան (786—809) ստիպված էր անձամբ միջամտել Հայաստանի գործերին, իր փոխարքային հրահանգելով հնազանդեցնել ըմբոստ հայերին[16]։ Արաբ մեկ այլ մատենագիր՝ Բալազուրին հիշում է հայ իշխանների ինքնակա վիճակը[17]։ Ղևոնդը վկայում է, որ VIII դարի երկրորդ կեսին Արծրունյաց իշխան Գագիկը, Վասպուրականի իշխանների գլուխ անցած, ինքնուրույնաբար իշխում էր հայրենի տիրույթներում, Վասպուրականը պաշտպանելով օտար ցեղերի հարձակումներից, նույնիսկ հարկման ենթարկելով Վասպուրականին հարևան որոշ շրջանների բնակչությանը[18]։

Միաժամանակ նկատելի է, որ վաղ միջնադարում ֆեոդալական հարաբերությունների զարգացման բնագավառում տեղի ունեցան արմատական փոփոխություններ։ Հետզհետե խորացավ ֆեոդալական (նախարարական) խոշոր հողատիրության ներտոհմային ստորաբաժանումը տվյալ տան տարբեր ազատների միջև։ Այս երևույթին մեծապես նպաստեց սեպուհական-ֆեոդալական հողատիրության զարգացումը, որի պայմաններում սեպուհները հետզհետե վերածվեցին ժառանգական հողասեփականատերերի։ Այս երևույթը նշանավորում էր ֆեոդալական սեփականության զարգացման նոր փուլը, երբ հետագա ֆեոդալականացման պայմաններում ավելի ու ավելի էր մեծանում մասնատիրական հողասեփականության դերը, ավելի էին կատարելագործվում սեփականատիրական հարաբերությունները։ Ընդ որում, սեպուհական հողատիրությունը, լինելով ֆեոդալական հարաբերությունների զարգացման արդյունք, միաժամանակ մեծապես նպաստում էր այդ հարաբերությունների խորացմանը։ Հողատիրության այդ տեսակի զարգացման միտումը կախյալ գյուղացիության շահագործման ուժեղացումն էր, հասութաբեր նոր միջոցների ձեռքբերումը։ Ուստի սեպուհ-ֆեոդալների խավի կողմից երկրամասի ֆեոդալականացման ընթացքը ուժեղացնելուն ընդդիմակայում էր ոչ թե հին նախարարական ավագանին, այլ ֆեոդալական կախման մեջ ընկած գյուղացիությունը։ Ունենալով ընդարձակ հողատիրություններ, սեպուհ-հողատերերը տվյալ տան ներսում ստեղծեցին իրենց տոհմաճյուղը և մասնատիրական ֆեոդալական տնտեսությունը։ Բնականաբար, որոշակի փոփոխություններ կրեց նաև հայրենական հողատիրությունը, որը ավելի ու ավելի էր վերածվում տնտեսական զորեղ գործոնի, առանց որի միջին ֆեոդալները զուրկ կլինեին քաղաքական ազդեցությունից։ Վերջիններիս հանդեպ զուտ քաղաքական առումով տերունական իրավազորությունը շարունակում էր պահպանել տոհմի նախարարը, որը, հասկանալի է, ուներ նաև իր առանձին հայրենակալվածքը։ Նոր հարաբերությունները ծանր հարված հասցրին նախարարական հնամենի հասարակարգին, խորտակեցին տոհմական շատ վերապրուկներ։ Այս պայմաններում միջին (կամ գահակալ) ֆեոդալի՝ իր ուրույն ֆեոդալական տնտեսության հոգսերով տարված տնտեսատիրոջ առաջնային գործառնությունն էր դառնում զինական ծառայությունն իր սյուզերենի հանդեպ, և շահագործվող խավերից ֆեոդալական ռենտայի ստացումը, որի շնորհիվ մեծանում էին նրա տնտեսական հասույթները, առավել ապահով, ավելի ազդու էր դառնում նրա քաղաքական ուժն ու ինքնուրույնությունը, հնարավոր էր դառնում կախման մեջ դնել մանր ազատանուն, պահել սեփական զորամիավորումներ։ Այս երևույթը ցայտունորեն դրսևորվեց Արծրունյաց տոհմի հետագա զարգացման, ներքին ստորաբաժանման, ճյուղավորման մեջ։ Հատկանշական է,

---

16 Хилал ас Сабӣ. Установления и обычаи двора халифов (Русум дар ал Халифа), пер. И. Михайловой. М., 1983. с. 43, 44.

17 Baladhuri. I, p. 330.

18 Ղևոնդ. ԼԲ, էջ 133—134։

որ եթե V դարի կեսին այդ տոհմի ներսում գոյություն ուներ ընդամենը երկու ճյուղ[19], ապա IX դարի առաջին կեսին տոհմն ուներ ավելի քան 16 ճյուղ[20], որոնք, անշուշտ, առաջատար դեր ունեին Վասպուրականի Արծրունյաց իշխանությունում։ Ուշագրավ է, որ Արծրունի պատմագիրը Արծրունյաց մեծ իշխանի վասալ ֆեոդալների մեջ հիշում է սեպուհներ Դավիթին ու Սահակին, առանց նշելու նրանց տոհմական պատկանելությունը[21]։ Ակներև է, որ հիշյալ սեպուհները Արծրունիներ էին և այնքան հայտնի, որ մատենագիրը հարկ չի համարել նրանց տոհմը հիշել։ Այս փաստը վկայում է այդ սեպուհների ինքնուրույնության, սեփական զորամիավորում, նաև հայրենատիրույթ և բերդեր ունենալու մասին։ Թովմա Արծրունու վկայությամբ, այդ և մյուս սեպուհները Վասպուրականի մեծ իշխանի կանչով ներկայացան իրենց զորաբաժիններով, որպեսզի նրա դրոշի ներքո մեկնեն մարտի, ընդդեմ Խալիֆայության կամակատարների[22]։ Այս հանգամանքը վկայում է Արծրունյաց գահերեցից նրանց կախվածության մասին։ Իհարկե, այստեղ խոսք կարող է լինել միայն քաղաքական կախվածության մասին։ Ֆեոդալական հասարակարգի տարբեր շերտերը միայն այդ ճանապարհով կարող էին միավորվել։ Այն ժամանակվա տարապայման իրավիճակում, ֆեոդալական միջավայրում հնարավորը քաղաքական համախմբումն էր։ Այդ համախմբումը արտահայտվում էր վասալ ֆեոդալների կողմից մեծ իշխանին զորական ուժեր տրամադրելու և նրա մոտ որևէ պաշտոն վարելու մեջ։ Թովմա Արծրունին վկայում է, որ IX դարի կեսին, երբ Վասպուրականի գահակալ իշխան Աշոտ Արծրունին, տեղի տալով Խալիֆայության գերակշիռ ուժերի առջև, ամրացավ Նկան ամրոցում, իր հետ վերցրեց ֆեոդալ-ազատների, որոնք նրա մոտ վարում էին այս կամ այն պաշտոնը։ Նրանց մեջ էին իշխանի թիկնապահ Վահրամ սեպուհը և վասալական ծառայություններ կատարող ուրիշ սեպուհներ[23]։

Կասկածից վեր է, որ եթե սեպուհ-ֆեոդալները, որպես ֆեոդալական ավագանու միջին շերտի ներկայացուցիչներ, ունեին իրենց սեփական զորամիավորումները, ապա պետք է ունենային նաև իրենցից կախյալ ազատներ, քանի որ առանց նրանց հնարավոր չէր զորաբանակ կազմել։ Որոշակի քաղաքական կախվածության մեջ լինելով Արծրունյաց մեծ իշխանից, միջին ֆեոդալը (որը հաճախ կարող էր լինել երբեմնի մանր ազատը, որ առաջ էր քաշվել ծառայության ժամանակ), որպես հայրենատեր ֆեոդալ և մեծ իշխանի վասալ, իր հերթին ուներ իր վասալները, ի դեմս մանր ազատների, որոնց նկատմամբ միայն նա ուներ տերունական իրավունքներ։ Իրենց ծառայության դիմաց մանր ազատները սյուզերենից ստանում էին պայմանական հողաբաժին, թեև պետք է ընդունել, որ այս սկզբունքը ոչ միշտ էր գործում։ Երբեմն մանր ազատներն իրենց ծառայության դիմաց պարզապես ոռճիկ էին ստանում։ Միջին ֆեոդալներից ունեցած կախվածության պայմաններում ծառայապարտ մանր ազատները, բնական է, չէին կարող պահել սեփական զորաբաժին, քանի որ վասալական կացության բերումով նրանք ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական կախման մեջ էին իրենց սյուզերենից։ Այսօրինակ հանգամանքներում մանր ազատները, հասկանալի է, չէին կարող ներկայացնել միասնական քաղաքական ուժ և հանդես էին գալիս որպես տարբեր ֆեոդալների իշխանությանը ենթակա, տնտեսական ու քաղաքական ինքնուրույնությունից զուրկ, բայց իհարկե ֆեոդալական դասի արտոնություններից օգտվող խավ։ Սեփական զորաբաժիններ ունենալու հանգամանքն ինքնին միջին ֆեոդալներին ընձեռում էր որոշակի ինքնուրույնու-

---

19 Ղ ա զ ա ր Փ ա ր պ ե ց ի. ԽԲ, էջ 160. ԽԷ, էջ 185։ Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, աշխ. Ե. Տէր-Մինասեան. Երևան, 1957, էջ 99, 100։

20 Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի. II, Զ, էջ 186։

21 Նույն տեղում։

22 Նույն տեղում։

23 Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի. III, Բ, էջ 218—219։

թյուն, որի հիմքը հայրենատիրության առկայությունն էր։ Հարկ է նշել, որ հողատիրության հայրենականք ձևի ազդեցությունը ֆեոդալականացման խորացմանը զուգընթաց գնալով ավելի էր մեծանում։ Այն գերիշխող էր ոչ միայն Վասպուրականի իշխանության գյուղաշխարհի հազարավոր համայնքներում, այլև քաղաքներում, որոնք ծագելով գյուղերից, շարունակում էին մնալ ֆեոդալ-հողատիրոջը ենթակա հողատիրություններում՝ որպես ֆեոդալիզմին բնորոշ հասարակական օրգանիզմ։ Նմանօրինակ հանգամանքներում, հասկանալի է, միջին ֆեոդալների քաղաքական անջատողականությունը ավելի իրական էր դառնում։ Ընդ որում վերջիններս միաժամանակ շաղկապող օղակ էին մեծ իշխանի և մանր ազատների միջև։ Ուստի ֆեոդալական տան նախարարի զորությունը մեծապես պայմանավորված էր միջին ֆեոդալների դիրքորոշմամբ, որոնց մեծ իշխանը հնազանդության մեջ էր պահում ոչ թե տնտեսական, այլ սոսկ քաղաքական գործոնի շնորհիվ։

Մանր ազատներին տրված հողաբաժինները պայմանական տիրույթ՝ պարգևականք էին, որոնց տերերը քաղաքական տեսակետից ունեին կրավորական դեր, իրենց սյուզերեն միջին ազատի դեմ չէին կարող համախմբված հանդես գալ։ Սակայն պետք է ի նկատի ունենալ, որ առանց մանր ազատների, միջին ֆեոդալների գոյությունն անհնար էր։ Ընդհանուր առմամբ առկա է ֆեոդալական հողային սեփականության յուրօրինակ աստիճանակարգում, որտեղ առաջատար դեր ունեին հայրենատեր ֆեոդալները։ Ֆեոդալական-վասալական հարաբերությունների պայմաններում վճռորոշ դերն, անշուշտ, հայրենակալվածքինն էր, քանի որ հատկապես այն էր նպաստում ֆեոդալական հարաբերությունների խորացմանը, մինչդեռ այդ առումով պարգևականք տեսակի հողատիրությունները ունեին համեմատաբար համեստ դեր, քանի որ զուրկ էին ինքնուրույնության այն հնարավորություններից, որոնցով մեծապես օժտված էր հայրենականքը։

Այն պարագան, որ տանուտերը միջին ֆեոդալների նկատմամբ չուներ ֆեոդալական, տնտեսական իրավագորություն և օգտվում էր միայն քաղաքական լծակներից, պատճառ էր դառնում, որպեսզի նա անհնազանդ ֆեոդալից հողերը բռնագրավեր միայն քաղաքական միջոցներով, այն է՝ բռնի ուժի գործադրմամբ։ Ըստ Թովմա Արծրունու և նրա շարունակողի տեղեկությունների, դա տեղի էր ունենում զինված միջամտությամբ, մեծ իշխանի կողմից ապըստամբ վասալ ֆեոդալի իրավասությանը ենթակա գավառի (բերդերով հանդերձ) գրավմամբ։ Նման քայլով, բնականաբար, մեծ իշխանը միջին ֆեոդալին հարկադրում էր ճանաչել իր տերունական իրավազորությունը՝ այդպիսով պատժելով իր իրավունքները ոտնահարող վասալին[24]։ Փաստորեն Վասպուրականի մեծ իշխանի և նրա վասալ միջին ֆեոդալների միջև եղած փոխհարաբերությունները կարգավորվում էին քաղաքական միջոցներով։ Հասկանալի է, միայն զինական ուժի առկայությամբ էր, որ մեծ իշխանը պահպանում էր իր գերակա դիրքը և տերունական իրավունքները։ Հակառակ պարագայում նա ստիպված էր լինում հաշտվել իր իրավունքների քամահրման փաստի հետ։ Այդպես վարվեցին, օրինակ, Վասպուրականի մեծ իշխաններ Աշոտ Արծրունին և նրա հաջորդ Դերենիկը, երբ Արծրունյաց տոհմի երկրորդական ճյուղի իշխան, միջին ֆեոդալ Գուրգեն Ապուսելճը հրաժարվեց ենթարկվել նրանց իշխանությանը[25]։

Այն փաստը, որ միջին ֆեոդալը և մեծ իշխանը սերում էին նույն տոհմից, կարող էր պատճառ դառնալ, որպեսզի նախկին սեպուհը, դառնալով ինքնու-

---

24 Թովմա Արծրունին վկայում է, որ մեծ իշխան Դերենիկ Արծրունին ապստամբ միջին ֆեոդալ Հասան Արծրունի իշխանից խլեց նրա տիրույթները և Սևան ամրոցը, ապա վերստին հանձնեց նույն իշխանին (Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի. III, Ի, էջ 362—363)։ Անանունի տվյալներով Արծրունյաց մեծ իշխան Գագիկը զենքով խլեց միջին ֆեոդալներ, ապստամբած Շապուհի և Գրիգոր Ապուհամզայի տիրույթները, ապա վերադարձրեց՝ կրկին հաստատելով նրանց հողատիրական իրավունքները (նույն տեղում, IV, Գ, էջ 455—456)։

25 Նույն տեղում, III, ԺԷ, էջ 343—345։

ության հողատեր, իր տիրույթներին տիրեր ոչ թե պայմանական, այլ ժառանգական հիմունքներով[26], քանի որ նույն տոհմի հողասեփականությունը դիտվում էր որպես տվյալ տոհմի անդամների «եղբայրական հաս» (բաժին)[27]։ Հենց այս իրողության ուժով էր, որ տվյալ տոհմաճյուղը հարատևում էր այնքան ժամանակ, քանի դեռ գոյություն ուներ տոհմը։ Նույնիսկ այն դեպքում, երբ տոհմաճյուղի վախճանված ղեկավարին փոխարինում էր մանկահասակ որդին կամ կինը, միևնույն է, տվյալ գերիշխող տոհմից ընձյուղված ֆեոդալական տոհմաճյուղը շարունակում էր հարատևել որպես տնտեսական ինքնուրույն միավոր։ Հարկ է նշել, որ մեծ իշխանը նաև կապող օղակ էր միջին ֆեոդալների միջև։ Անհրաժեշտության դեպքում նա համախմբում էր նրանց, ապահովելով իր իշխանության, հետևաբար նաև նրան ապավինած ֆեոդալների անվտանգությունը։ Այս տեսակետից հատկանշական է, որ մեծ իշխան Աշոտ Ածոունին 850 թ. դիմելով իր վասալ իշխաններին, հիշեցրեց, որ հայրական խնամք է տարել նրանց նկատմամբ, ապահովել նրանց մշտական անվտանգությունը[28]։ Անշուշտ, տոհմի տանուտերը միջին ֆեոդալներ դարձած սեպուհներին իրավունք էր վերապահում ստեղծելու ինքնուրույն տոհմաճյուղ, քանի որ դրա համար առկա էին անհրաժեշտ տնտեսական ու քաղաքական պայմաններ. այս դեպքում, իհարկե, նկատի էր առնվում նրանց նվիրվածությունը տվյալ տոհմին և, ամենից առաջ, մեծ իշխանին։ Հասկանալի է, միջին ֆեոդալները անհրաժեշտ դեպքերում իրենց ռազմուժով պետք է օգնության հասնեին գահերեց իշխանին։ Նրանք երբեմն նույնիսկ այնքան էին զորանում, որ մրցակցում էին Արծրունյաց մեծ իշխանի հետ։ Այսպես օրինակ, Ապուպելճի որդի Գուրգենն այնքան էր ուժեղացել, որ նույնիսկ գրավեց Արծրունյաց գերիշխող տոհմաճյուղի հողատիրությունների մի զգալի մասը։ Վերջիններս թեև փորձեցին զենքի ուժով վերադարձնել գրավված շրջանները, բայց ապարդյուն[29]։

Կարելի է կարծել, որ սեպուհները, դառնալով միջին ֆեոդալներ, իրենց տնտեսությունը կազմակերպում էին ոչ թե իրենց հայրենականքը համարվող բոլոր տիրույթներում, այլ դրանց մի մասում։ Այսպես կարծելու հիմք է տալիս այն պարագան, որ միջին ֆեոդալը ուներ մանր ազատներից համալրվող զորք և, հետևաբար, այն պահպանելու համար իր հողերի մեծ մասը պետք է բաժաներ իր զորքում ծառայող մանր ազատներին։ Մնացած մասը վերածվում էր սեփական կալվածային տնտեսության, որը համարվում էր հայրենականքի լոկ մի մասը և բնավ չէր վերածվում նոր ձևավորված առանձին հայրենատիրության։ Հայրենականքի այս մասի մշակումը պետք է կազմակերպվեր հայրենատեր ֆեոդալի հրահանգներով, և նա էր անմիջաբար իրացնելու իր տիրույթների այդ մասից ստացվող հասույթները՝ նրա վրա նստած գյուղացիներից վերցնելով հողային ռենտա (վերջինս գոյանում էր աշխատավոր գյուղացիների զանազան պարհակներից, պարտույթներից ու վճարումներից)։

Սկզբնաղբյուրների վկայություններից երևում է, որ քննարկվող պատմաշրջանում Վասպուրականի խոշոր ֆեոդալական հողատիրության բնորոշ առանձնահատկություններից մեկը գերիշխող ֆեոդալական տոհմի տիրույթները զենքի ուժով ընդլայնելու սկզբունքի գործադրումն էր։ Թովմա Արծրունու վկայությամբ, Վասպուրականի իշխան Դերենիկ Արծրունու վախճանվելուց հետո նրա որդին՝ Գագիկը տիրելու էր ոչ միայն Ռշտունյաց գավառին, այլև մերձակա այն շրջաններին, որոնք նա ի զորու կլիներ գրավել[30]։ Ակներև է, որ այս հանգամանքը պետք է լիներ ֆեոդալական հարաբերությունների զարգացման դրսևորումներից մեկը, այն բանի հայտանիշը, որ Վասպուրականի իշխանությու-

26 Նույն տեղում, ԺԴ, էջ 328։

27 Տե՛ս նույն տեղում, ԺԷ, էջ 344։

28 Նույն տեղում, Բ, էջ 222։

29 Նույն տեղում, ԺԵ, էջ 339, ԺԷ, էջ 344։

30 Նույն տեղում, ԻԲ, էջ 374։

նում ֆեոդալականացումն ընթանում էր ոչ միայն խորությամբ, այլև լայնությամբ, հանգամանք, որն անշուշտ խոսում էր նաև Արծրունյաց գերիշխող տոհմաճյուղի քաղաքական և տնտեսական գործուն դերի մասին։ Այս երևույթի տիպական լինելն է վկայում այն փաստը, որ Արծրունյաց պատմագիրը հաղորդում է նաև Դերենիկի մյուս որդու՝ Գուրգենի կողմից իր տիրույթները ըստ հնարավորին զենքի ուժով ընդլայնելու մասին։ Պատմագիրը այդ կարգի տվյալներ է բերում նաև Վասպուրականի ուրիշ իշխանների վերաբերյալ։ Այս փաստերից միաժամանակ կարելի է հետևեցնել, որ ֆեոդալական խոշոր հողատիրությունը չուներ վերջնական ու որոշակի սահմաններ, դրանք կարող էին ընդլայնվել կամ սեղմվել տիրող ֆեոդալի զորությանը և քաղաքական իրադրությանը համապատասխան։

Վասպուրականի իշխանության միջին հողատեր ֆեոդալները, մանր ազատները դիտվում էին որպես «բնիկ հեծելազունք»[31], որը, իհարկե, ամենից առաջ տոհմիկության ցուցանիշ էր։ Սակայն նրանք համարվում էին ազատ թե՛ իրենց տոհմիկության և թե՛ քաղաքական ու տնտեսական կարողության պատճառով։ Այս հանգամանքը ի նկատի ուներ Գրիգոր Նարեկացին, երբ գրում էր, որ ֆեոդալ ազատները «ազատ են հարկերից, լծից, իշխող, հրամայող են և ոչ թե կառավարվող»[32]։ Այսպիսով, «ազատ», «ազատանի» հասկացությունները ունեին տնտեսական և քաղաքական բովանդակություն։ Դրանք ամենից առաջ արտահայտում էին ապահարկության, լծապարտ չլինելու, տոհմիկության և իշխելու հատկանիշներ։ Սակայն պետք է նշել, որ ֆեոդալական աստիճանակարգման ուժով ազատը միաժամանակ իր տիրոջ (սյուզերենի) ծառան (վասալն) էր։ Ուշագրավ է, որ Անանիա Նարեկացին այս առնչությամբ գրում է, որ երբեմն ֆեոդալ-ազատը կարող էր ունենալ շատ վասալներ, բայց կարող էր և ինքը ծառայել ուրիշ իշխանի[33]։

Ֆեոդալ հողատերը փաստորեն հասույթներ էր ստանում իր սեփական տընտեսությունից։ Դրանց մի զգալի մասը հպատակ գյուղացիներից վերցվում էր դրամով[34]։ Այս հանգամանքն ինքնին կարող էր հնարավորություն ընձեռել ֆեոդալին գանձեր կուտակելու։ Մատենագրական կցկտուր տվյալներից երևվում է, որ Վասպուրականի ֆեոդալ-հողատերերը ունեին իրենց գանձատները[35]։ Նրանց մի զգալի մասը գանձակուտակմամբ շոշափելի հարստություն էր դիպել[36]։ Այս պայմաններում, բնականաբար, մեծանում էր ֆեոդալական տնտեսության նշանակությունը, որպես հարստության կուտակման անհատնում աղբյուրի։ Ընդամին երբեմն ազատը նույնիսկ դրամով նոր հողեր էր ձեռք բերում։

Վասպուրականի ֆեոդալական հողատիրության աճը է՛լ ավելի մեծացրեց այդ իշխանության տնտեսական կարողությունը, ամրապնդեց Արծրունիների իշխանության տնտեսական և քաղաքական հիմքերը։ Դրա հետ մեկտեղ այդ տոհմի շուրջը համախմբվեցին Վասպուրականի ֆեոդալական այլևայլ տներ։ Անշուշտ, տանուտիրական վաղնջական համակարգը կորցնում էր իր նշանակությունը, ստեղծված պայմաններին համապատասխան ձեռք բերելով նոր բո-

---

31 Նույն տեղում, Ը, էջ 276—277։

32 Գրիգորի Նարեկայ վանից վանականի Մատենագրութիւնք. Վենետիկ, 1840, էջ 85—86։

33 Մաշտոցի անվ. Մատենադարան (ՄՄ), ձեռ. № 4682, էջ 3ա։

34 Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1912, էջ 330։

35 Թովմա Արծրունի. II, Զ, էջ 191. III, ԺԷ, էջ 345, Ի, էջ 360։ Հովհաննէս Դրասխանակերտցի, էջ 270 և այլն։

36 Խոշոր գանձարանատեր է հիշվում VII դարի Վասպուրականի իշխաններից Վարդ Պատրիկ Ռշտունին (տե՛ս Ա. Սրապյան. Հայ միջնադարյան գրույցներ. Երևան, 1969, էջ 230—231)։ Մեծ գանձեր էին կուտակել իշխան Վասակ Արծրունին, Վասպուրականի Սնան բերդի տեր Հասան Արծրունին և ուրիշներ (տե՛ս Թովմա Արծրունի. II, Զ. էջ 191. III, Ի, էջ 360 և այլն։

վանդակություն։ Եթե մինչ այդ տանուտերը իրավասու էր սոսկ իր տոհմի նկատմամբ, ապա VIII դարից առավել զորեղ տները տերունական իրավունք են ձեռք բերում նաև մյուս, պակաս կարևոր տոհմերի նկատմամբ։ Այս երևույթը հետզհետե խորանալով, դառնում է բնականոն, որի հետևանքով Վասպուրականի իշխանության պակաս նշանավոր տոհմերը, ճանաչելով Արծրունիների գերակայությունը, հետզհետե ձուլվում են նրանց հետ, վերածվելով երկրորդական տոհմաճյուղերի։ Ուշագրավ է, որ նույնիսկ Ռշտունյաց երբեմնի զորեղ տոհմի որոշ իշխաններ հիշվում են որպես Արծրունիներ[37]։ Իհարկե, Վասպուրականի ֆեոդալական տների մի զգալի մասը վերացավ քաղաքական ասպարեզից ոչ թե այն պատճառով, որ ձուլվեց Արծրունիներին, այլև որովհետև խիստ թուլացած լինելով խալիֆայության հարուցած ծանր հալածանքներից, ուրիշ ելք չգտավ, քան Արծրունիների հովանավորությանը ապավինելը և այդ ճանապարհով պահպանեց իր գոյությունը։ Սակայն հողատերերի մի մասը վերացավ քաղաքական ասպարեզից։ Նրանց հողատիրույթների զգալի մասն անցավ արաբական ցեղերին։ Այդ կարգի հողերը, գրում է Բալազուրին, սովորաբար տրվում էին եկվոր ցեղերին, հաշվի առնելով նրանց կողմից մահմեդականություն ընդունելու վաղեմությունը, ինչպես նաև խալիֆայության ռազմարշավներին մասնակցելու հանգամանքը[38]։ Հայաստան թափանցած ցեղերը, դատելով ըստ ամենայնի, ունեին նշված առավելությունները։ Թովմա Արծրունու հաղորդման համաձայն, IX դարի կեսին Վասպուրական ներխուժած օտար ցեղերը սփռվեցին որոշ շրջաններում, միմյանց միջև բաժանելով հողատարածությունները[39]։ Բնական է, բաշխվում էին հայ իշխանների լքած հողերը, որոնք, ըստ երևույթին, պետք է մշակեին դարձյալ հայ շինականները։ Այս շրջանում խալիֆայության զորապետները խրախուսում էին հայ ֆեոդալների հողերի բռնագրավումը, որպես նրանց թուլացնելու արմատական միջոց, քանի որ վերջիններիս ուժն ու զորությունը պայմանավորված էր նրանց հողային հարստությամբ։ Ստեղծված օրհասական պայմաններում, ինչպես պատմում է Արծրունյաց տան մատենագիրը, զորեղները գազանացած՝ անամոթաբար կողոպուտի էին մատնում բովանդակ Վասպուրականը[40]։ Հասկանալի է, նմանօրինակ հանգամանքներում ֆեոդալ-հողատերը, զրկվելով իր շարժական և անշարժ ստացվածքից, ընկնում էր անելանելի կացության մեջ և ստիպված համագործակցում էր հայրենի նահանգը շահատակողներին կամ հեռանում օտար վայրեր։ Ֆեոդալ-հողատերերի սեփականությունը այն աստիճան էր վտանգի ենթարկված, որ, ինչպես հավաստում է Արծրունյաց պատմագիրը, նույնիսկ խալիֆայությանը նվիրված հայ իշխանները ապահով չէին զգում իրենց և հարստությունը թաղում էին գետնի տակ[41]։

Վասպուրականի իշխանության ֆեոդալական հողատիրությունը զգալի հարվածներ կրեց հատկապես 850-ական թթ., երբ բազմաթիվ անհնազանդ հայ իշխաններ ունեզրկվեցին։ Խալիֆայությունը բնակչությանը հարկում էր, հաշվի չառնելով երկրի տնտեսական հնարավորությունները, բնակչության հարկունակությունը։ Հարկային բեռի մեծացումը, հողային ֆոնդի նվազումը, զանազան շարաշահումները մեծապես վնասեցին երկրամասի տնտեսական կյանքի բնականոն զարգացմանը։ Որոշ գավառներ փաստորեն մարդաթափ եղան, այդ շրջանների հնօրյա անդաստանները գրեթե դադարեցին մշակվելուց։ Բնական է, որ ստեղծված պայմաններում խաթարվում էին նաև բուն ֆեոդալական հարաբերությունները, խախտվում դրանց ավանդական հիմքերը։ Երկրամասի

---

37 Յովհան Մամիկոնեան. Պատմութիւն Տարօնոյ, աշխ. Ա. Գ. Աբրահամյանի. Երևան, 1941, էջ 149։

38 Baladhuri. II, New York, 1924, p. 242—243.

39 Թովմա Արծրունի. III, ե, էջ 251։

40 Նույն տեղում, ԺԲ, էջ 312։

41 Նույն տեղում, II, Զ, էջ 191։

տնտեսական զարգացումը ոչ միայն դանդաղում, այլև ենթարկվում էր հիվանդագին կերպափոխման, այլաձևման։ Այս պայմաններում հաճախ նույնիսկ ֆեոդալական խոշոր հողատիրությունների տեր եկեղեցին զրկվում էր իր արտոնություններից, ապահարկությունից[42]։ Անկայուն իրավիճակը իրեն զգալ էր տալիս նաև հետագայում։ Այս տեսակետից հատկանշական է Անանիա Նարեկացու դիտողությունը, թե «այսօրվա ընչավետը վաղը դառնում է աղքատ», կորցնելով իր առանձնաշնորհումները[43]։

870-ական թթ. Արծրունիների իշխող տոհմաճյուղի վերականգնված գերիշխանության, երկրամասում հաստատված հարաբերական խաղաղության պայմաններում Վասպուրականի իշխանությունում տնտեսությունը ունենում ֆեոդալական հողատիրության աճ, ամրապնդվում են նաև եկեղեցու ֆեոդալական հիմքերը։ Հովհաննես Դրասխանակերտցին վկայում է, որ X դարի շեմին Վասպուրականում «...Սուրբ հիմունք եկեղեցւոյ անվրդով մնացեալ կանգնէին, և շինութիւն և խաղաղութիւն և նորոգութիւն և յապահովութիւն աշխարհի բնաբար բերիւր. և լիութիւն և պտղաբերութիւն ի շնորհացն Աստուծոյ պարգևէր»[44]։ Պատմագրի այս տեղեկությունը որոշ հիմք է տալիս կարծելու, որ Վասպուրականի իշխանության վերջին փուլում երկրամասում նկատվում էին տնտեսական և սոցիալական որոշ տեղաշարժեր, որոնց պայմաններում Արծրունյաց գահերեցները վարում էին ֆեոդալական հողատերերի, եկեղեցու շահերից բխող քաղաքականություն։ Իրենց հողատիրությունը ընդարձակեցին Վասպուրականի թե՛ աշխարհիկ և թե՛ հոգևոր ֆեոդալները։ Ընդ որում վանական հողատիրության աճը հիմնականում կատարվում էր աշխարհիկ ֆեոդալների ընծայաբերությունների միջոցով։ Այսպես, Դերենիկ իշխանի մահից հետո (885 թ.) նրա որդիները Աղթամարի Ս. Խաչ վանքին են ընծայում հինգ գյուղ իրենց բնակիչներով, նույնիսկ Բերկրի քաղաքը իր շրջակայքի հողերով, Մանակերտի քարհանքը[45]։ Մեծ նվիրատվություններ էին արվում հատկապես Վարագավանքին, որն ուներ ընդարձակ հողեր[46]։ Հայտնի էին Նարեկավանքը[47], Իլուվանքը[48] և այլն։

Կարելի է կարծել, որ եկեղեցական հողատիրության աճը նպաստում էր արտադրողական ուժերի զարգացմանը, ֆեոդալական հողատիրության արտադրական հնարավորությունների ընդլայնմանը։ Ընդսմին վանական հողատիրության ընդարձակմանը զուգընթաց եկեղեցու տիրույթների մի զգալի մասը վեր էր ածվում ագարակների, որտեղ աշխատում էին տեղաշարժման իրավունքից գրեթե զուրկ շինականները։ Այս տեսակետից հատկանշական է, որ Խոսրով Անձևացին իր մեկնողական գործերից մեկում հիշում է «ծառային որ յագարակէն գայցէ»[49]։ Միաժամանակ երևում է, որ ծառաները զուրկ էին սեփական տնտեսություն վարելու իրավունքից, ուստի Խոսրով Անձևացին գրում է. «Ծառայք ի տէրանց ղպէտս իւրեանց հայցէն»[50]։ Վասպուրականի մեկ այլ

42 Նույն տեղում, ԺԸ, էջ 346։

43 ՄՄ, ձեռ. № 4682, էջ 3ա։

44 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 325։

45 Թովմա Արծրունի. III, Ի, էջ 369։ Այստեղ պատմիչի հիշատակած Աղթամար կղզու Ս. Խաչ վանքը, անշուշտ, չպետք է նույնացնել հետագայում նույն կղզում Գագիկ Արծրունու կառուցած համանուն տաճարի հետ, քանի որ նվիրատվություն կատարող Արծրունի իշխան Աշոտը վախճանվել էր 905 թ., մինչդեռ Աղթամարի Գագկաշեն տաճարը կառուցվել է 920-ական թթ.։ Ըստ երևույթին, այստեղ խոսքը գնում է կղզում ավելի վաղ եղած համանուն եկեղեցու մասին։

46 Տե՛ս ՄՄ, ձեռ. № 4878, էջ 285ա, 286բ։

47 Ստեփանոսի Տարոնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, աշխ. Ստ. Մալխասյանց. Ս. Պետերբուրգ, 1885, III, է, էջ 174։

48 ՄՄ, ձեռ. № 5467, էջ 21ա։

49 ՄՄ, ձեռ. № 2607, էջ 23ա։

50 Նույն տեղում, էջ 85ա, 192ա։

մատենագիր՝ Հակոբ Նարեկացին գրում է, որ փրկագնմամբ կարելի էր ազատվել «ծառայական կապից»[51]։ Ճիշտ է, Աբբասյանների ժամանակ գյուղացիության հեռանալը իր համայնքից չէր արգելվում[52], սակայն մատենագրական որոշ տվյալներից երևում է, որ IX—X դդ. նման արգելք եղել է։ Մի ձեռագրում նշվում է, որ ծառաները ճանաչում էին միայն մի տիրոջ[53]։ Հետևաբար, չէին կարող տեղափոխվել ուրիշ ֆեոդալ-հողատիրոջ մոտ։ Ինչպես տեսանք, Դերենիկ իշխանի մահից հետո գյուղերն իրենց բնակիչներով նվիրաբերվել են Աղթամարի Ս. Խաչ եկեղեցուն։ Եթե գյուղը բնակիչների հետ ընծայվել է եկեղեցուն, ուրեմն պետք է կարծել, որ նրա բնակիչները եղել են կախյալ և զուրկ տեղաշարժման իրավունքից։ Սովորաբար ֆեոդալ-հողատերերը դեմ էին գյուղացիների՝ իրենց համայնքից հեռանալուն։ Սակայն պետք է կարծել, որ գյուղացին ևս ոչ միշտ էր հակված իր հայրենի գյուղից հեռանալու մտքին, քանի որ դժվար էր ղրկվել տարիներով մշակված անդաստանից, տուն ու տեղից, եթե, իհարկե, առկա էին փոքր ի շատե տանելի պայմաններ։

Մատենագրական կցկտուր տվյալներից երևում է, որ IX—X դդ. Վասպուրականում կիրառվել է վարձու աշխատանք, որի համար վճարվել է դրամով[54]։ Ֆեոդալական հարաբերությունների զարգացման պայմաններում դրամ ձեռք բերելու համար, որքանով որ կարելի է դատել մեր ձեռքի տակ եղած սկզբնաղբյուրներից, հոգևոր ֆեոդալները զբաղվել են նաև առևտրական գործարքներով։ Այս մասին է վկայում X դարի մատենագիր, վասպուրականցի Արամի թուղթը՝ ուղղված անձնացյաց Ատոմ իշխանին (Գուրգեն Ապուպելճի որդուն), որտեղ մատենագիրը խնդրում է կանխել եկեղեցականների մեջ բուն դրած շահստացության հակումը[55]։ Հայտնի է, որ եկեղեցական կանոնները դատապարտում են առևտուրը, վաշխառությունը, գանձակուտակումը, որպես բարոյազանց զբաղմունքներ[56]։ Անշուշտ, կանոնական որոշումները հիմնականում արձագանք էին իրական կյանքում տեղ գտած երևույթների։

Ամփոփելով նշենք, որ Վասպուրականի իշխանությունում V—IX դդ. տեղի է ունենում ֆեոդալական հարաբերությունների հետագա խորացում։ Ֆեոդալականացման երկարատև ընթացքը կերպափոխեց, ավելի բարդացրեց հողային հարաբերությունները։ Վասպուրականում որոշակի զարգացման հասան ֆեոդալական ինստիտուտները։ Սեպուհության ինստիտուտի վերլուծությունը մեծապես նպաստում է ֆեոդալական հողատիրության զարգացման, ֆեոդալական հարաբերությունների խորացման խնդրի ըմբռնմանը։ Ընդ որում սեպուհության ինստիտուտի ֆեոդալական էությունը ըստ ամենայնի նպաստեց հայրենականք բնույթի հողատիրության լայն տարածմանը, Վասպուրականում ֆեոդալական հարաբերությունների ավելի արագ և լայն հիմքի վրա զարգացմանը։ Ավատատիրական հարաբերությունների ըստ ամենայնի զարգացման ընթացքում Վասպուրականի իշխանությունում ֆեոդալական հողասեփականատիրությունը աստիճանաբար ձեռք բերեց ֆեոդալիզմին ներհատուկ աստիճանակարգմանը բնորոշ գծեր։ Այդ հանգամանքի ուժով Արծրունյաց տիրույթներում հողասեփականատեր վերնախավի տարբեր շերտերը միմյանց հետ լծորդվում էին քաղաքական կապերի ու շահախնդրությունների միջոցով։ Հարկ է նշել, որ օտար նվաճողների (Իրան, Արաբական խալիֆայություն) տիրապետության պայմաններում թեև պահպանվեցին հողատիրության ավանդական ձևերը (հայրենականք, պարգևականք), սակայն հաճախ հողասեփականատիրական հինավուրց սկզբունքները խաթարվում էին, փոխվում էր նրանց բովանդակությունը։

---

51 ՄՄ, ձեռ. № 4067, էջ 14բ։

52 Balādhurī. I. p. 338.

53 ՄՄ, ձեռ. № 911, էջ 99ա։

54 Նույն տեղում, էջ 97ա. ձեռ. № 8343, էջ 51ա։

55 ՄՄ, ձեռ. № 3710, էջ 317 ա-բ։

56 Կանոնագիրք հայոց, աշխ. Վ. Հակոբյանի. Ա, Երևան, 1964, էջ 357։

Այդուհանդերձ, Վասպուրականում Արծրունյաց իշխող տոհմությունը և նրա շուրջը հանախմբված, վասալական կախվածության մեջ եղող ֆեոդալ-հողատերերը, որոնք կազմում էին ֆեոդալական դասակարգի միջին շերտը, ի վիճակի եղան օտար տիրապետության պայմաններում պահպանել իրենց քաղաքական ինքնուրույնությունը և նույնիսկ ընդլայնել հողային հարստությունը։ Վասպուրականի Արծրունյաց իշխանությունում ֆեոդալական հարաբերությունների զարգացմանը նպաստում էր նաև եկեղեցական հողատիրությունը, որը զարգանում էր նույն հիմքերի վրա, ինչ աշխարհիկ հողասեփականատիրությունը։ Ընդսմին աշխարհիկ ֆեոդալները ամեն կերպ սատարում էին եկեղեցական հողատիրության ընդլայնմանը, եկեղեցու ֆեոդալական հիմքերի ամրապնդմանը, նրա հեղինակության ըստ ամենայնի մեծացմանը։

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ РАЗВИТИЯ ФЕОДАЛЬНОГО ЗЕМЛЕВЛАДЕНИЯ ВАСПУРАКАНА (V—IX вв.)

В. М. ВАРДАНЯН

Резюме

Васпураканское княжество Арцрунидов являлось государственным образованием с развитыми феодальными институтами. Длительный процесс феодализации региона трансформировал и осложнил поземельные отношения. Рассмотрение института сепухства способствует пониманию и осмыслению проблемы земельной собственности и ее эволюции. Феодальная природа института сепухства обусловила распространение наследственной формы феодального землевладения—айренаканк, которое было общераспространенным явлением. В процессе развития феодальных отношений крупная земельная собственность постепенно приобрела иерархические черты. Разные слои феодальной знати политическими узами субординировались в княжестве. В период владычества Халифата социально-экономические процессы региона замедлились, порой даже деформировались. Хотя феодалы Васпуракана подверглись частичному уничтожению и экспроприации, однако уцелевшие князья сохранили свои феодальные прерогативы. В хозяйственном освоении земель региона арабы заметной роли не играли, они в основном не вмешивались в поземельные отношения. Сохранились традиционные формы феодального землевладения—айренаканк и паргеваканк. Налоги и подати из Васпураканского княжества в форме централизованной феодальной ренты *(«արքունի հարկ»)* входили в казну халифов.

Васпураканская церковь, как крупный землевладелец, способствовала расширению и углублению феодализации региона. Феодалы Васпуракана способствовали укреплению феодальных позиций Васпураканской церкви.